

1.

ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ.

ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՆ

ՈՒՐԵՐՑ ԹԱԹՈՅԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ Ծալկայի շրջանի վերաբերյալ

Ներկայիս Ծալկայի շրջանի տարածքը 1051 քառ. կմ է: Վարչական առումով այն մտնում է Վրաստանի Հանրապետության Քվեմո-Քարթլի նահանգի կազմի մեջ եւ նրա վեց շրջաններից մեկն է: Բացի Ծալկայի շրջանից, Քվեմո-Քարթլիի մեջ են մտնում նաեւ Գարդաբանի, Մառնեուլի, Թեթրիձղարոյի, Բոլնիսի եւ Դմանիսի շրջանները: Դմանիսի եւ Թեթրիձղարոյի շրջանների հետ Ծալկան սահմանակից է հարավից եւ արեւելքից, Շիրա-Քարթլի նահանգի Գորիի եւ Կասպիի շրջաններին՝ հյուսիսից եւ հյուսիս-արեւելքից, որոնցից առանձնացված է Թրիալեթի լեռնաշղթայով, Սամցխե-Ջավախքի նահանգի Բորժոմի, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններին՝ արեւմուտքից եւ հարավ-արեւմուտքից: Շրջանի միջին բարձրությունը ծովի մակերեւույթից 1,900 մետր է:

Շրջանի վարչական կենտրոնն է Ծալկա քաղաքը: Շրջանի արեւելյան սահմանից մինչեւ Թբիլիսի հեռավորությունը կազմում է 94 կմ, իսկ շրջկենտրոնը գտնվում է Թբիլիսիից 130 կմ հեռավորության վրա: Շր-

ջանի ավանների եւ գյուղական համայնքների թիվն է՝ 28, քաղաքային եւ գյուղական տիպի բոլոր բնակավայրերինը՝ 42:

Հնում Ծալկայի շրջանը Հայաստանի հյուսիսային ռազմապաշտպանական վահանի՝ Գուգարաց բրեշխուկյան կարեւոր հատվածներից մեկն է եղել՝ կազմելով նրա Թոեղք գավառի հիմնական մասը:

2. Ծալկայի շրջանի հայաբնակ գյուղերը. Շրջանի բնակչության էթնիկական կազմը 1841- 1921 թվականներին

Ծալկայի շրջանը ներկայումս ունի տասներեք հայաբնակ գյուղ: Իրանք են՝ Աշկալա, Այազմա, Բուռնաշեթ, Դամալա-Խարաբա, Դարագյուղ, Խաչգյուղ, Դաշբաշ, Ղաբուռ, Ղզլքիլիսա, Ղուշի, Նարդեւան, Չիֆթքիլիսա, Օզնի:

Գրեթե բոլոր հայկական գյուղերը հիմնադրվել են 1828-29 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, էրզրումի, Կարսի, Բայազետի շրջաններից գաղթած հայերի կողմից: Այդ ժամանակ Ծալկայի շրջանում հաստատվեց շուրջ 1050 հայ ընտանիք: Բնակչության ծագման, ինչպես նաեւ բնակավայրի հիմնադրման ժամանակի առումներով, առանձնանում է Դաշբաշ գյուղը, որը հիմնադրվել է 18-րդ դարի վերջերին Արցախից եւ Լոռիից գաղթած հայերի կողմից:

Աշխարհագրական առումով Ծալկայի շրջանի հայկական գյուղերը հիմնականում գտնվում են համանուն սարահարթի արեւմտյան եւ հյուսիսային մասերում, այսինքն՝ Վերին Ծալկայում: Շրջանի հարավում եւ արեւելքում են տեղակայված միայն երկու հայկական գյուղ՝ Դաշբաշ ու Դարագյուղը:

Բացի հայերից, Օսմանյան կասրուկյան Տրապիզոնի նահանգից Ծալկայի շրջան տեղափոխվեցին նաեւ մեծ թվով հույներ, որոնք էլ կազմեցին բնակչության մեծամասնությունը: 19-րդ դարում՝ 1829-1830-ականներին շրջանում հիմնադրվեց միակ վրացական բնակավայրը՝ Ռեխան: Շրջանում 19-րդ դարի առաջին քառորդում հիմնադրվեցին նաեւ

Թուրքական գյուղեր՝ Գեղակլարին, Արջեւանը, Սարվանը, Թեջիսը, Չուլանը եւ Մանասազքենդը:

Ըստ 1840-41 թվականներին Ծաղկայի շրջանի բնակչության մարդահամարի տվյալների շրջանի հայաբնակ գյուղերն ունեին 2,746 բնակիչ, այդ թվում՝ Ղզլքիլիսա՝ 408, Նարդեւան՝ 342, Ղուշի՝ 168, Աշկալա՝ 688, Օզնի՝ 184, Նոր Բուռնաշեթ՝ 178, Այազմա՝ 121, Խաչգեղ՝ 180, Դերե (Դարագյուղ)՝ 220, Դաշբաշ՝ 35:¹

19-րդ դարի ընթացքում նոր՝ բարենպաստ աշխարհագրական, քաղաքական եւ տնտեսական պայմաններում, Ծաղկայի շրջանի հայ բնակչությունն ունեցավ աճի բարձր տեմպեր: Այսպես, 1897 թվականի մարդահամարի տվյալներով, Ծաղկայի շրջանում բնակվում էր 22,628, որոնք ըստ ազգությունների բաշխվում էին հետևյալ կերպ. հույներ՝ 10,739, հայ-լուսավորչականներ՝ 7,178, ուղղափառ հայեր՝ 986, հայ բողոքականներ՝ 186, թուրքեր՝ 2 530, վրացիներ՝ 500, գերմանացիներ՝ 439, ռուսներ՝ 62, լեհեր՝ 8 մարդ:²

Շրջանի հայ բնակչության աճը շարունակվեց նաեւ 20-րդ դարի սկզբում: Ըստ 1914 թվականի վիճակագրական տվյալների, շրջանում բնակվում էր արդեն 11,283 հայ եւ 14,000 հույն:³

Հարկ է նշել, որ Ծաղկայի շրջանը 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին մտնում էր Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ եւ բաժանված էր մի քանի գյուղական հասարակությունների:

1918 թվականին, հայ-թուրքական առաջին պատերազմի ժամանակ, ի տարբերություն Ախալքալակի եւ Ախալցխայի գավառների, Ծաղկան, գտնվելով թուրքական գրոհի հիմնական ուղիներից այն կողմ,

¹ Տե՛ս Դավթյան Ա. Հայկական եւ հայաստանը բնակավայրերը Վրաստանում, Եր. 1997, էջ 37-40:

² Միխայելյան Հ.Ս., Ծաղկայի հայերի ազգագրությունը եւ բանահյուսությունը, Եր., 1998, էջ 21:

³ Տե՛ս Սահակյան Տ.Ղ. Մեծ Հայաստանի Գուգարք-Գողերձական տարածաշրջանի քաղաքական եւ հոգեւոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչեւ 1980-ական թվականները, Եր., 2004, էջ 306:

գրեթե շտուժեց: Ավելին, Ծալկայի հայերն ապաստան տվեցին թուրքական ջարդի սպառնալիքից խուսափած Ախալքալակի շրջանի հայ գաղթականության մի զգալի մասին:

3. Ժողովրդագրական գործընթացները Ծալկայի շրջանում Խորհրդային իշխանության տարիներին

1918 թ. մայիսի 26-ին հռչակվում է Վրաստանի Հանրապետությունը, որի կազմի մեջ ընդգրկվում է նաև ներկայիս Ծալկայի շրջանը: 1921 թվականի փետրվարի 28-ին Վրաստանում հաստատվում են խորհրդային կարգերը: Նույն տարվա հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի պլենումի որոշմամբ, Ախալքալաքն ու Ծալկան միացվում են Վրաստանին: Այդ որոշումն իրավական բնույթ է ստանում 1921 թվականի նոյեմբերի 6-ին Թիֆլիսում կնքված հայ-վրացական պայմանագրով:⁴

Խորհրդային իշխանության տարիներին վրացական իշխանությունները սկիզբ են դնում Վրաստանի հարավային շրջաններում էթնիկ վրացիների բնակեցման քաղաքականությանը: Այդ գործընթացը տարբեր ուժգնությամբ դրսևորվում է ինչպես Ջավախքում, այդպես էլ Ծալկայի, Մառնեուլի, Դմանիսի, Բոլնիսի, Գարդաբանի եւ այլ շրջաններում: 1950-ական թվականներից սկսած Վրաստանի այլ շրջաններից, հատկապես Իմերեթիայից, վրացի բնակչության «ավելցուկը», սկսում է տեղափոխվել վերը նշված շրջաններ, ինչի արդյունքում այնտեղ գրանցվում է վրացիների թվաքանակի զգալի աճ: 1980-ական թվականների վերջերին Ծալկաի, Մառնեուլի, Դմանիսի, Բոլնիսի, Գարդաբանի շրջանների բնակչության ընդհանուր թվաքանակից (608,491 մարդ) շուրջ 20 տոկոսը (121,000-ն) արդեն կազմում էին էթնիկ վրացիները: Ոչ մեծ թվով վրացիներ վերաբնակեցվեցին նաև Ծալկայի շրջանում, հիմնականում, Ծալկա քաղաքում:

⁴ Նույնը, էջ 356:

1989 թվականի հունվարի 1-ի տվյալներով, շրջանում կար 46 բնակավայր, որից 1 քաղաք, 3 քաղաքատիպ ավան, 41 գյուղական բնակավայր: Ծալկայի շրջանի բնակավայրերից 28-ում (Ծալկա քաղաք, ավաններ՝ Բեդիան, Թրիալեթ, Խրամգես, Չատախ, գյուղեր՝ Ավրանլո, Ախալիկ, Բաշքյոյ, Բեշտաշեն, Դումբատ, Հունիակալա, Ջինիս, Եդիքիլիսա, Իմերա, Կյարակ, Կարակոմ, Լիվադ, Նեոխարաբա, Հոլեանք, Սանթա, Սաֆար-խարաբա, Տարսոն, Տիքիլիսա, Խադիկ, Խանդո, Ծինձղարո, Չապաեկա, Շիպիակ) բնակչությունը բացառապես կամ ճնշող մեծամասնությամբ հունական էր, 13 բնակավայր հայաբնակ էր, 5-ը ադրբեջանաբնակ, մեկը՝ վրացաբնակ: Շրջանում բնակվում էր 44,438 մարդ, որոնք ըստ ազգությունների բաշխվում էին հետևյալ կերպ. հույներ՝ 27,127 (61%), հայեր՝ 12,671 (28,5%), ադրբեջանցիներ՝ 2,281 (5,1%), վրացիներ՝ 1,613 (3,5%), ռուսներ՝ 320 (0,7%), օսեր՝ 82 (0,2%), ուկրաինացիներ՝ 72 (0,2%), բելորուսներ՝ 71 (0,15%), այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ 201 (0,55%):⁵

1914 եւ 1989 թվականների վիճակագրական տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ թեեւ բոլոր ազգային խմբերն աճ էին արձանագրել, սակայն, աճի առավել բարձր տեմպերը բաժին են ընկել հույն բնակչությանը, որը գրեթե կրկնապատկվել է: Ի տարբերություն հույների, 1914թ.-ի համեմատ հայ բնակչության աճը կազմում է շուրջ 12 տոկոս: Հայ բնակչության աճի նման ցածր ցուցանիշը կարելի է բացատրել հիմնականում արտագաղթի գործոնով, որը լայն ծավալներ ընդունեց 1970-ական թթ.-ից սկսած եւ, հատկապես, 80-ական թթ. սկզբներին: Արտագաղթողների ճնշող մեծամասնությունը տեղափոխվում էր ՀեՍՀ եւ ՌեՖՍՀ: Ըստ վիճակագրական տվյալների 1970-ից մինչեւ 1989 թվական, Ծալկայի շրջանի բնակչությունը նվազել է 6 284 մարդով:⁶

1980-ական թվականների կեսերին Ծալկայի շրջանի հայ բնակչությունն ըստ բնակավայրերի բաշխվում էր հետևյալ կերպ՝ Աշկալա՝

⁵ Տես <http://www.greek.ru/events/detail.php?ID=640>

⁶ Նույն տեղում:

2,217 մարդ (542 ընտանիք), Այազմա՝ 689 մարդ (171 ընտանիք), Բուռնաշեթ՝ 535 մարդ (113 ընտանիք), Դամալախարաբա՝ 281 մարդ (41 ընտանիք), Դարագյուղ՝ 1,100 մարդ (250 ընտանիք), Խաչգյուղ՝ 1,087 մարդ (258 ընտանիք), Դաշբաշ՝ 462 մարդ (152 ընտանիք), Դաբուռ՝ 647 մարդ (162 ընտանիք), Դզլքիլիսա՝ 2 100 մարդ (430 ընտանիք), Դուշի՝ 914 մարդ (250 ընտանիք), Նարդեւան՝ 1,682 մարդ (451 ընտանիք), Զիֆթքիլիսա՝ 859 մարդ (218), Օզնի՝ 882 մարդ (233 ընտանիք):⁷

4. Ժողովրդագրական գործընթացները Ծալկայի շրջանում հետխորհրդային տարիներին

1980-ական թվականների վերջերից եւ 1990-ական թվականների սկզբներից, այսինքն՝ Խորհրդային Միության կազմալուծման նախօրյակին եւ դրանից անմիջապես հետո սկիզբ առած ժողովրդագրական վարգացումներն էապես փոխեցին Ծալկայի շրջանի ժողովրդագրական պատկերը:

Նախ՝ Խորհրդային Միության փլուզումից հետո երեւան եկած սոցիալ-տնտեսական անկումն առաջ բերեց արտագաղթի հուժկու ալիք: Այն առավել մեծ չափով ընդգրկեց շրջանի հույն բնակչությանը, որը բաց սահմանների պայմաններում եւ Հունաստանի կառավարության խրախուսման շնորհիվ, հնարավորություն ստացավ հայրենադարձվել Հունաստան: Հույների որոշ մասը տեղափոխվեց հարավային Ռուսաստան, մասնավորապես, Կրասնոդարի երկրամաս: Ըստ 2002 թվականի մարդահամարի պաշտոնական տվյալների, շրջանում, նախկին 27,127 հույն բնակչությունից, մնացել էր 4,589-ը:

Երկրորդ, վրացական կառավարությունը, մտահոգվելով այն հանգամանքից, որ հույն բնակչության արտագաղթի հետեւանքով հայերը կազմելու են շրջանի բնակչության ճնշող մեծամասնությունը, մեկնարկեց շրջանի հունական գյուղերն աշարներով եւ սվաններով լայնածավալ վերաբնակեցման ծրագիր, որը շարունակվում է առ այսօր: Աշարի-

⁷ Տե՛ս Դավթյան Ա., Նշվ. աշխ., էջ 321-421:

այի բարձրլեռնային խոլոլոյի շրջանից աջար վերաբնակիչների առաջին խոշոր խումբը շրջան մուտք գործեց 1998 թվականին: Ըստ վերաբնակեցման պաշտոնական հիմնավորման՝ շրջան են տեղափոխվում սվանական եւ աջարական բարձրլեռնային այն բնակավայրերի բնակիչները, որոնց բնակավայրերը պարբերաբար ենթարկվում են սողանքների: Դա, իբր, պարտավորեցնում է վրացական իշխանություններին տրամադրելու նրանց բնակություն անվտանգ պայմաններ առավել ապահով՝ Ծալկայի շրջանում:⁸

Ըստ մամուլից քաղված տվյալների, 2004 թվականին վրացական իշխանությունները հունական բնակավայրերում վերաբնակեցման համար գնել են 176 տուն:⁹ 2005թ. նախատեսվում էր 300 բնակարանի գնում՝ մեկ տան համար 1,500-2,000 ԱՄՆ դոլարի վճարմամբ:¹⁰ Ըստ Միջազգային փաստահավաք առաքելության (ՄՓԱ) ղեկույցի, 2005 թվականի ապրիլի դրությամբ, հունական բնակավայրերում գնվել եւ վերբնակիչ ընտանիքներին է տրամադրվել 500 տուն:¹¹

Կազմակերպված վերաբնակեցմանը զուգընթաց տեղի է ունենում տարերային վերաբնակեցում, որի ընթացքում աջարներն ու սվանները ինքնակամ գրավում են հունական գյուղերում դատարկված բնակարանները եւ հողերը, ինչը բախումներ է առաջացնում հունական գյուղերում դեռ ապրող հույն բնակիչների եւ նորեկների միջեւ: Շրջան են ներթափանցում նաեւ քրեածին տարրեր, որոնք հիմնականում զբաղվում են դատարկվող հունական բնակավայրերի թալանով, համարձակություն

⁸ Տե՛ս <http://kavkaz.memo.ru/digesttext/digest/id/787521.html>

⁹ Տվյալները քաղված են 2005թ. մարտի 22 «Ազատ Վրաստան» պարբերականում տպագրված Քվեմո-Քարթլիի նահանգապետ Զուրաբ Մելիքիշվիլու հետ հարցազրույցից (www.svobodnaya-gruzia.com/print.php?url=politic/56/01):

¹⁰ Տե՛ս <http://www.newsgeorgia.ru/analytics/20040913/292975.html> :

¹¹ Տե՛ս *International Fact Finding Mission, Ethnic Minorities in Georgia, April, 2005* (<http://www.fidh.org/IMG/pdf/ge412ang.pdf>)

ունենալով, անգամ ահաբեկելու դրանցում մնացած ծեր եւ անպաշտպան հույն բնակչությունը:¹²

1990-ական թթ.- ին վրացական կառավարությունը նույնիսկ քննարկում էր Ծալկայի շրջանում թուրք-մեսխեթցիների բնակեցնելու հնարավորությունը: Մասնավորապես, 1994թ. հոկտեմբերի 19-ին Կրասնոդարի երկրամասի Դրիմի շրջանում բնակվող թուրք-մեսխեթցիների 100 ընտանիքի առաջարկվեց տեղափոխվել Ծալկա, եւ միայն այն բանից հետո, երբ երկրամասում բնակվող հույները նախազգուշացրեցին թուրք-մեսխեթցիների համայնքի ղեկավարներին նման քայլի հետեւանքով հնարավոր բացասական զարգացումների մասին, այս նախագիծը չիրագործվեց:¹³ Սակայն, վրացական իշխանությունները դեռեւս վերջնականապես չեն հրաժարվել նշված նախագծից, ինչի վկայությունն է ժամանակ առ ժամանակ մամուլում այդ թեմայի արձարծումը:¹⁴

Ըստ պաշտոնական տվյալների, 2002 թվականին, շրջանն արդեն ուներ 20,888 բնակչություն, որից հայեր` 11,484 (54,98%), հույներ` 4,589 (21,97%), վրացիներ` 2,510 (12,02%), ադրբեջանցիներ` 1,992 (9,54%), ռուսներ` 125 (0,60%), այլ ազգություններ` 188 (0,89%):¹⁵

¹² Այսպես, 2005թ. մարտի 16ին հունական Ավրանլո գյուղում բնակվող մի քանի աշարներ գինված որսորդական հրացաններով ներխուժեցին գյուղի տներից մեկը, որտեղ բնակվում էին մեծահասակ հույն միայնակ ամուսիններ, դաժան ծեծի ենթարկեցին` անգրավելով 1000 լարի եւ 300 ԱՄՆ դոլար: Տե՛ս www.svobodnaya-georgia.com/print.php?url=politic/56/01:

¹³ Правозащитный центр “Мемориал” Нарушение прав вынужденных мигрантов и этническая дискриминация в Краснодарском крае. (<http://www.memo.ru/hr/discrim/meshi/Chapt16.htm>).

¹⁴ Տե՛ս Georgia's Greek And Armenian Communities Decry Resettlement Plans By Zaal Anjaparidze (http://www.jamestown.org/edm/article.php?article_id=2369459).

¹⁵ Տվյալները վերցված են Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից` http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf

5. Ծալկայի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությունը

Շրջանի հայ բնակչության տեղում հիմնական զբաղմունքն է գյուղատնտեսությունը: Ինչպես եւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում Ծալկայի շրջանում եւս գյուղատնտեսական հիմնական մշակաբույսը կարտոֆիլն է: Մշակվում է նաեւ ցորեն, կաղամբ, գարի, ցորեն, եգիպտացորեն: Անասնապահության հիմնական ճյուղը խոշոր եղջերավոր անասունների բուծումն է, թեեւ որոշ տնային տնտեսություններն ունեն նաեւ ոչխարներ եւ այծեր: Տարածված է նաեւ մեղվապահությունը: Գյուղատնտեսական արտադրանքը գրեթե բացառապես իրացվում է տեղական շուկաներում (մասնավորապես, հայկական Դուշչի գյուղում Շաբաթ օրերին կազմակերպվող տոնավաճառի ընթացքում) կամ Թբիլիսիում:

Խոշոր արտադրական ձեռնարկություններ հայկական գյուղերում բացակայում են: Առկա են միայն կաթնամշակման փոքր եւ միջին կետեր, որոնց տված արտադրանքը, հիմնականում պանիրը, նույնպես վաճառվում է շրջանային շուկաներում կամ մայրաքաղաքում:

Սակայն հայկական գյուղերում գյուղատնտեսությամբ զբաղվում են գրեթե բացառապես կանաչք եւ մեծահասակները: Շրջանի հայ ընտանիքների ճնշող մեծամասնության ապրուստի հիմնական միջոցները գոյանում են արտագնա աշխատանքներից ստացած եկամուտներից: Հիմնականում դեպի Ռուսաստան մշտապես կամ սեզոնային հիմքով արտագնա աշխատանքների մեկնելը աշխատունակ տարիքի հայ տղամարդկանց մեծ մասի (շուրջ 60-70 տոկոսի) հիմնական զբաղմունքն է:

Ենթակառույցները, մասնավորապես՝ շրջանը Թբիլիսիի հետ կապող մայրուղին, խիստ քայքայված վիճակում են: Հայկական գյուղերը իրար միացնող ճանապարհները գրեթե բացառապես գրունտային են:

Քանի որ ենթակառույցների նման վատթար վիճակը նպաստում է շրջանի երկրի կենտրոնից որոշակի մեկուսացմանը (այսպես, շրջկենտրոն Ծալկայից մինչեւ Թբիլիսի 95 կմ ճանապարհը մեքենաները հաղթա-

հարում են շուրջ 2,5-ժամվա ընթացքում) վրացական իշխանությունները վերջին ժամանակներում որոշակի աշխատանքներ են տարել ենթակառուցվածքների վերանորոգման ուղղությամբ: Այսպես, ԱՄՆ կառավարության կողմից իրականացվող «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում տրամադրված գումարով նախատեսվում է վերանորոգել Թբիլիսի-Մանգլիսի-Մալկա-Նինոծմինդա մայրուղին: Ծրագրի իրականացումը մեկնարկում է 2007թ.-ի գարնանը: 2006 թ.-ի օգոստոսից վերագործարկվել է Ախալքալաք-Թբիլիսի երկաթգիծը:¹⁶

6. Կրթական վիճակը

2005 թ.-ի տվյալներով Մալկայի շրջանում գործում էր 36 դպրոց, այդ թվում՝ հայկական՝ 13, վրացական՝ 17, ադրբեջանական՝ 3, ռուսական՝ 3:¹⁷

1980-ական թվականների համեմատությամբ շուրջ երկու անգամ կրճատվել է դպրոցական տարիքի երեխաների թիվը. եթե 1980-ական թվականներին շրջանի հայկական դպրոցներ էր հաճախում շուրջ 2,800 երեխա, ապա 2005 թվականին աշակերտների թիվը կազմում էր 1,566 (Տե՛ս Հավելված 4):

Մալկայի շրջանի հայկական բնակավայրերի դպրոցների մեծամասնությունը ներկայումս գտնվում է ծայրահեղ քայքայված վիճակում: Անբավարար վիճակում են շենքային պայմանները, դպրոցներից շատերը վերջին անգամ կապիտալ վերանորոգման են ենթարկվել դեռևս

¹⁶ Շրջանի սոցիալ-տնտեսական եւ կրթական կացության մասին տվյալները հավաքվել են հեղինակի կողմից 2005թ.-ին Մալկայի շրջանում կատարած դաշտային ուսումնասիրությունների ընթացքում, ինչպես նաեւ քաղված են մամուլում տարբեր հրատարակումներից, հատկապես, Փոքրամասնությունների հնդիրների եվրոպական կենտրոնի 2006թ.-ի հոկտեմբերին հրատարակված զեկուլցից (Տե՛ս http://www.ecmi.de/download/working_paper_36_en.pdf):

¹⁷ Տե՛ս International Fact Finding Mission, *Ethnic Minorities in Georgia, April, 2005* (<http://www.fidh.org/IMG/pdf/ge412ang.pdf>). 2006թ.-ի տվյալներով շրջանում գործում էր 35 հանրակրթական դպրոց:

Խորհրդային Միության փլուզումից առաջ: Ընթացիկ վերանորոգման աշխատանքներն ուղեկցվում են միջոցների յուրացմամբ եւ փոշիացմամբ: Բոլոր դպրոցներում կահույքը խիստ հնամաշ ու քայքայված է, բազմիցս անգամ ենթարկվել է վերանորոգման:

Գրեթե բոլոր գյուղական դպրոցներում բացակայում են համակարգչային դասարանները, խիստ սակավ են առկա հայերենով ուսուցման օժանդակ նյութերը (քարտեզներ, գրականություն եւ այլն):

Անխտիր բոլոր հայկական գյուղերի դպրոցներում վրաց լեզվի եւ գրականության, վրաց պատմության եւ աշխարհագրության առարկաները դասավանդվում են ազգությամբ վրացի ուսուցիչների կողմից: Տեղացիների կարծիքով, նրանց վրա դրված է նաեւ գյուղի ներքին անցուդարձի ու տրամադրությունների մասին վրացական համապատասխան կառույցներին տեղյակ պահելու գործառույթը: Տարբեր կարգի հավելավճարների շնորհիվ վրացագրի ուսուցիչների աշխատավարձը հասնում է շուրջ 250-300 ԱՄՆ դոլարի, ինչը մոտ 5 անգամ բարձր է հայ ուսուցիչների աշխատավարձից:

Նշված կացությունը էականորեն վաթարացնում է կրթության որակը՝ էլ ավելի ուժեղացնելով եւ խորացնելով սոցիալ-տնտեսական ու սոցիալ-հոգեբանական մի շարք բացասական գործոնների ազդեցությունը եւ նպաստելով բնակչության մեջ իրենց հարազատ բնակավայրերում ապագա շտեմնելու տրամադրությունների տարածմանն ու արմատավորմանը եւ դրա հետեւանքով արտագաղթի ծավալների աճին:¹⁸

7. Կրոնական կյանքը

19-րդ դարի ընթացքում շրջանի անխտիր բոլոր հայկական գյուղերում, կառուցվեցին քարաշեն եկեղեցիներ, դրանց կից հիմնադրվեցին ծխական դպրոցներ: Խորհրդային կարգերի հաստատվե-

¹⁸ Շրջանի կրթական վիճակի մասին տվյալները հավաքվել են Հեղինակի կողմից 2005թ. ամռանը Մալկայի բոլոր հայկական գյուղեր կատարած շրջագայության ընթացքում:

լուց հետո եկեղեցիները փակվեցին, իսկ շենքերը սկսվեցին օգտագործվել գյուղատնտեսական զանազան պետքերի համար:

ԽՄՀՄ-ի փրկումից հետո բնակչությունը հնարավորություն ստացավ վերաբացել նախկին եկեղեցիները: Վերջին 15 տարիների ընթացքում հայկական գյուղերի բոլոր եկեղեցիները վերանորոգվել են նախկին համագյուղացիների միջոցներով, որոնք ներկայումս բնակվում են Ռուսաստանում եւ ԱՊՀ այլ երկրներում:

Սակայն բոլոր այս վերանորոգված եւ վերաբացման եկեղեցիներում կանոնավոր եկեղեցական արարողություններ եւ ժամերգություններ չեն տարվում. Ոչ միայն առանձին գյուղերը չունեն քահանաներ, այլ շրջանն ամբողջությամբ զուրկ է իր առանձին հոգեւոր հովվից: Բնակչության հոգեւոր պետքերը բավարարվում են Ախալքալաքի Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդության եկեղեցականների ոչ հաճախ այցերի միջոցով:

8. Ծալկայի շրջանի ժողովրդագրական իրավիճակի զարգացման միտումները

Ներկայումս Ծալկայի շրջանում տիրող ժողովրդագրական կացությունը կարելի է բնութագրել որպես անկայուն եւ արագ փոփոխվող: Այսպես, 2005 թ.-ին, տարբեր հաշվարկներով, շրջանում մնացել էր արդեն շուրջ 2,000 հույն:¹⁹ Իսկ 2006 թ.-ի հունիսին Ծալկայի վարչակազմի տվյալներով շրջանի բնակչությունը կազմել է 22,600 մարդ, որից 11,000 հայ, 8,000 վրացի, 1,500 հույն, 1,800 ադրբեջանցի եւ 300 այլ ազգերի ներկայացուցիչներ:²⁰

Քանի որ վերոնշյալ տվյալները վրացական բնակչության թվաքանակի մասով որոշակիորեն ուռճացված են եւ չեն արտահայտում իրական պատկերը: Ըստ երեւոյթին, շրջանում ներկա դրությամբ բնակ-

¹⁹ Տե՛ս Հունական կառավարության հայտարարությունը Ծալկայի շրջանի էթնիկ հույների վիճակի մասին (<http://www.hri.org/news/greek/mpab/2005/05-04-22.mpab.html>):

²⁰ Տե՛ս http://www.ecmi.de/download/working_paper_36_en.pdf:

վում է շուրջ 4000-4500 վրացի (աջար եւ սվան), մնացած՝ 3000-4000-ը «մեռյալ հոգիներ» են: Կարելի է ենթադրել, որ «մեռյալ հոգիների» առկայությունն արդյունք է մի շարք գործոնների, որոնցից կարեւորագույներն են. շրջանային իշխանությունների ձգտումը «մեռյալ հոգիների» միջոցով յուրացնել Բաքու-Ջեյհան նավթատարի շինարարության ընթացքում պատվիրատուի կողմից բնակիչներին եւ համայնքներին վճարվող տարբեր կարգի փոխհատուցումները, եւ 2005 թ.-ից՝ այսինքն Բաքու-Ջեյհան նավթատարի շինարարության Մալկայի հատվածի աշխատանքների ամբողջացումից հետո, վրաց (աջար) ազգանբակչության արտագաղթի, ինչիին նպաստում է նաեւ Աջարիայում նույն թվականներից նկատվող որոշակի տնտեսական աշխուժացումը:

Սակայն, չնայած վերոնշյալ գործոնների, երկարաժամկետ առումով վրաց բնակչության թվաքանակի աճման միտումն ակնհայտ է: Դրան, անշուշտ, նպաստելու է նաեւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով նախատեսվող Թբիլիսի-Մալկա-Նինոծմինդա մայրուղու վերանորոգման ծրագրի իրականացումը եւ դրա միջոցով մայրաքաղաքի հետ հաղորդակցության մեծացումը:


Վրացական պաշտոնական վիճակագրությունն արժանահավատ չէ նաեւ հայ բնակչության թվաքանակի հարցում, քանի որ իր նշած տվյալները հիմնավորում է գյուղերում հաշվառվածների թվաքանակով: Մինչդեռ, հայկական գյուղերի տղամարդկանց, եւ, հատկապես, երիտասարդության մեծ մասը փաստորեն ներկա չէ բնակավայրում, այլ մեկնել է արտագնա աշխատանքների՝ Ռուսաստան: Շատերը հեռացել են բնակավայրից ընդմիջտ՝ տանելով իրենց հետ նաեւ ընտանիքները: Մեծ թիվ է կազմում թողակառու բնակչությունը: Մեր հաշվումներով շրջանում փաստացի բնակվող հայերի թիվը կազմում է շուրջ 8,000-8,500:

Իրավիճակի նման տեմպերով զարգացման ընթացքն անխուսափելիորեն հանգեցնելու է շրջանից հայ բնակչության արտագաղթի ծավալների աճին: Դա արդյունքն է լինելու ինչպես սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի, որը մոտակա ժամանակներում բարելավվելու որեւէ հեռանկար չունի, այդպես էլ այլ գործոնների, հատկապես՝ աջարների եւ

սվանների հոսքի ընդլայնմանը, եւ դրա հետեւանքով նորեկների եւ հայ բնակչության միջեւ նորանոր բախումների թվի ավելացմանը: Արդեն իսկ 2004-2006 թթ. տեղի են ունեցել մի շարք միջադեպեր, որոնք բացասաբար են ընկալվում հայ բնակչության կողմից՝ էլ ավելի սրելով սոցիալ-հոգեբանական մթնոլորտը:

Հավելված 1. Ծաղկալի շրջանի բնակչությունն ազգազգաբաշխական կազմը 1841-2006 թվականներին ըստ պաշտոնական տվյալների

Ազգություններ	1897	1989	2002	2006
Չայեր	8,350	12,671	11,484	11,000
Հույներ	10,739	27,127	4,589	1,500
Վրացիներ	500	1,613	2,511	8,000
Ադրբեջանցիներ	2,530	2,281	1,993	1,800
Այլք	509	746	311	300
Ընդամենը	22,628	44,438	20,888	22,600



Հավելված 2. Ծալկայի շրջանի հայ բնակչության թվաքանակն ըստ բնակավայրերի՝ 1841-2002 թվականներին (պաշտոնական տվյալներ)

Բնակավայր	1841	1980-ական թթ. սկիզբ	2002թ. ²¹
Նարդեան	342	1 682	1 501
Ղզլբիլիսա	408	2 100	1 811
Խաչգյուղ	180	1 087	846
Ղաբուն	-	647	491
Դամալա-Խարաբա	-	281	136
Դաշբաշ	35	462	352
Դարագյուղ	220	1 100	798
Աշկալա	688	2 217	2 043
Այազմա	121	689	589
Ղուշի	168	914	893
Օզնի /Յիկիա/	184	882	754
Բուննաշեթ	178	535	454
Չիֆթբիլիսա	-	859	464
<i>Ընդամենը</i>	<i>2 746</i>	<i>13 455</i>	<i>11 484</i>

Հավելված 3. Ծալկայի շրջանի հայկական դպրոցներում սովորող աշակերտության թիվը 1980-ական թվականներին եւ 2005 թվականներին

	1980-ական թթ. ²²	2005թ. ²³
Նարդեան	352	193
Ղզլբիլիսա	353	242
Խաչգյուղ	279	112
Ղաբուն	141	76

²¹ Պաշտոնական մարդահամարի տվյալները:

²² Տե՛ս Դավթյան Ա., Նշվ. աշխ., էջ 321-421:

²³ Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում հեղինակի կողմից հավաքած տվյալներ:

Չիֆթթիլիսե եւ Դամալա-Խարաբա	221	105
Դաշբաշ	81	38
Դարագյուղ	256	134
Աշկալա	450	220
Այազմա	135	101
Դուշի	250	106
Օզնի /Յինիա/	245	140
Բուռնաշէթ	96	99
Ընդամենը	2859	1 566